Ընդհանրապես այս բույսերի մոտ ալկալոիդների (նիկոտին, անարագին, սոլոնինա, ատրոպին և այլն) կուտակման ու փոփոխման հարցը կարևոր հանդամանք է։ Մ. Ֆ. Տերնովսկին պատվաստման հետևանքով ծխախոտի մոտ ստացել է իմունիտետ ալրադոզ և ծխախոտի մոզայիկա հիվանդությունների հանդեպ։ Ռ. Գեորգիևան և Բ. Ռոնկովը (Բուլղարիա) մորմազգիների միջտեսակային պատվաստումների ժամանակ ստացել են փոփոխություն սոլոնինայի կազմության մեջ։

Դ. Կոստովը և Մ. Ստոյլովը (Բուլղարիա) բավականին մեծ ծավալով աշխատանքներ են կատարել ծխախոտի վեգետատիվ հիբրիդացման ուղղությամբ։ Արդյունքները ուշադրավ են և ստացված ձևերը աչքի են ընկնում թե՛ իրենց որակական և թե՛ բարձր բերքատվության ցուցանիշներով։

Բ. Պ. Բրաուլավսկայան պոմիդորը պատվաստել է բելադոնայի վրա և հակառակը։ Պատվաստակալ պոմիդորի ազդեցության տակ բելադոնան ռեժեդ կերպով կորցնում է ատրոպին ալկալոիդը, իսկ պոմիդորը բելադոնայի ազ-

դեցության տակ, ընդհակառակը, կուտակում է այն: Ս. Օ. Բլորրինսկին, Կ. Ֆ. Կիրսանինան և Լ. Ա. Լյուկովան արջարնկույզը և ծխախոտը պատվաստելով պոմիդորի վրա, նկատել են, որ ծխախոտի տերևների մոտ բարձրացել է լիմոնաթթուն և իջել է վիտամին C-ի ու ածխաջրերի քանակը:

Ալկալոիդների քիտսինթեզի փոփոխությունների ուղղությամբ իր ժամանակ լավականին շատ հետազոտություններ է կատարել Ա. Ա. Շմուկը: Սակայն նրա ուսումնասիրությունների ժամանակ թերազնահատվել է արմատային սիստեմի դերը պատվաստման պրոցեսում: Վերջին ժամանակներս մի շարք հետազոտողներ գտնում են, որ արմատային սիստեմը հանդիսանում է ալկալոիդների սինթեզի հիմնական օրգանը:

Ս. Կ. Շպիլինը մեզ մոտ, Բ. Էֆրուսինը, Մատիլդին, Ա. Ֆարգին, Կ. Մատոն, Մ. Սարունան, Ժ. Կյուլին և Դ. Շվարցը (Ֆրանսիա) ցույց են տվել, թե ինչպես արջարնկույզի և մորմի զանազան տեսակների պատվաստների դեպքում փոխվում է ալկալոիդությունը և այն անցնում է հետադա սերունդներին:

Որոշ աշխատանքներ են կատարվում քաղցրահամ և դառը լյուպինը միմյանց վրա պատվաստելու ուղղությամբ (Ա. Վ. Սիրոնինկո և Գ. Ի. Սպիրիդոնովա, Բ. Ս. Սոշկով և Մ. Ի. Սմիրնովա, Ն. Ի. Ֆեյգինսոն և ուրիշ.): Փոխադարձ պատվաստումների հետևանքով կամ ավելացնել է ալկալոիդների քանակը և կամ պակասել: Եվ որովհետև ալկալոիդները լյուպինի մոտ սինթեզվում են մեծ մասամբ տերևների մեջ, ուստի նախ և առաջ պետք է կարգավորել բույսերի ասմիլյացիոն մակարդակը:

Հետաքրքիր աշխատանքներ են կատարվում լորաղգիների (թիթեռնա-ծաղկավորներ) պատվաստման ուղղությամբ: Յա. Յա. Պոլունինը, Լ. Դ. Ժարիկովան, Պ. Մ. Շուպան, Լ. Պ. Զուրկուկը, Ֆ. Դ. Կոզանը, Ա. Յու. Ռուզամուխամեդովան, Ն. Վ. Ցիցինը, Դ. Մ. Պիյտոնը և Խ. Ն. Բարբերը (Ավստրալիա), Վ. Ի. Տիմկինը ուժեղ փոփոխություններ են ստացել ոչոսի մոտ: Փոխվել են հատիկների գույնը, ձևը և մեծությունը, բույսերի վեգետացիոն շրջանը, բերքատվությունը, հիվանդությունների նկատմամբ նրանց դիմացկունությունը, համր, բիմիական կազմությունը և այլն:

Հ. Դ. Բատիկյանը, Մ. Դ. Իվաննիկովը պատվաստման միջոցով լորու բույսերի մոտ ուժեղ փոփոխություններ են ցույց տալիս, հատիկների գույնի և հիվանդությունների հանդեպ դիմացկունության նկատմամբ:

Վերջին ժամանակներս որոշ աշխատանքներ են կատարվում նաև արևածաղկի զանազան սորտերը միմյանց հետ և, մյուս կողմից՝ արևածաղիկն ու գետնատանձը պատվաստելու ուղղությամբ (Ա. Ե. Նրմակով, Ա. Լ. Կուրսանով, Ն. Տ. Շկրիպտիենկո, Ս. Վ. Անանիևա, Ա. Վ. Կորոլկովա, Լ. Ա. Շչիրբյա, Վ. Գ. Վոլֆ, Լ. Ա. Ժգանով, Ա. Յա. Պանչենկո և Վ. Ա. Միտյակովա, Դ. Ի. Ֆելիպով, Ա. Ռ. Ռոզաշ, Ի. Ի. Մարչենկո, Ն. Կալաշև և Յ. Կալադժին, Օ. Ի. Ռիժևա, Մ. Ստոյկով (Բուլղարիա):

Այս պատվաստումների ժամանակ փոխվում են բիոքիմիական հատկանիշները և, մասնավորապես, ճարպերի տոկոսը, վեգետացիոն շրջանը, վաղահասությունը, դիմացկունությունը հիվանդությունների նկատմամբ:

Բամբակենին նույնպես լավագույն կուլտուրա է միջսորտային և միջտեսակային վեգետատիվ հիբրիդացման համար: Այդ ուղղությամբ թե՛ մեզ մոտ և թե՛ արտասահմանում կատարվում են բավականին աշխատանքներ (Ե. Խ. Ուզենբաև, Լ. Ն. Արությունովա, Ի. Ս. Վելիև, Տ. Ի. Ժուրբին, Դ. Վ. Տեր-Ավանեսյան,

Ն. Ա. Գևորգյան, Ս. Ս. Կանաչ, Ռ. Ն. Տիրատուրյան, Ն. Բ. Բուզանբաև, Ն. Ս. Բորոգինա, Ն. Ն. Նազիրով, Ա. Վ. Պանով, Ա. Տ. Գաֆուրով, Ն. Ն. Կոնստանտինով, Ա. Ա. Կարապետյան, Վ. Ի. Կոկուև, Ֆ. Մ. Սուխոմլին, Ա. Դ. Դադարաև, Ա. Ի. Ավտոնոմով, Ռուժիցա Գլավինիչ (Հարավսլավիա): Ստացված են մի շարք հեռանկարային հիբրիդներ:

Ստացված փոփոխությունները մեծ մասամբ վերաբերում են տնտեսապես օգտակար այնպիսի հատկանիշների, ինչպիսիք են բերքի ավելացումը, վեգետացիոն շրջանի տևողությունը, վաղահասությունը, թելի ելը և որակը, դիմացկունությունը զանազան հիվանդությունների նկատմամբ, ճարպերի տոկոսը և այլն:

Վեգետատիվ հիբրիդացման աշխատանքները մեծ թափ են ստացել նաև Չինական ժողովրդական Ռեսպուբլիկայում (Ցզու ժեյ-մին, Շին Յի-սյույ, Սի-Յուան Չեն, Չին Չժու-ֆան, Յյան Սի-ին, Չժու Յան-կայ, Չին Սյու-ֆոս):

Չինաստանում պատվաստման միջոցով ստացված է Չանժուն-Յ րամբակենու սորտը, որը հայտնի է իր երկար թելով և համարյա երկու ամսով կրրճատված վեգետացիոն շրջանով:

Բոստանային կուլտուրաների հետ պատվաստման աշխատանքները տարվում են մեծ մասամբ բարձր շաքարայնությամբ, ցրտադիմացկուն և վաղահաս ձևեր ստանալու ուղղությամբ: Այստեղ միաժամանակ անհրաժեշտ է այդ ջերմասեր բույսերի տեղաշարժը դեպի հյուսիսային շրջաններ: Իր ժամանակ րավականին արժեքավոր աշխատանքներ է կատարել դիմադգիների հետ Ի. Վ. Միչուրինը: Այնուհետև այդ ուղղությամբ արժեքավոր աշխատանքներ են կատարել Ի. Ս. Գորշկովը, Ս. Պ. Լերեդևան, Վ. Ն. Սմիրնովը և Օ. Ի. Սմիրնովան: Սեխը և ձմերուկը պատվաստելով դդմի վրա, նրանք ստացել են բերքատու, շաքարի բարձր տոկոսով վաղահաս սեխի ձևեր: Միաժամանակ ստացված են դդմի ու սեխի, դդմի ու վարունգի միջցեղային սեռական հիբրիդներ՝ բույսերի նախնական վեգետատիվ մերձեցման հետևանքով:

Վերջին ժամանակներս մի շարք հետազոտողներ նույնպես ստացել են սեխի, ձմերուկի, դդմի, վարունգի արժեքավոր ձևեր՝ վեգետատիվ հիբրիդացման հետևանքով:

Օ. Վ. Յուրինան, Մ. Մ. Իդիրգինան, Ա. Դ. Սերկիսը, Պ. Ֆ. Կոնոնկովը և Լ. Լ. Պետրովան, Վ. Գ. Սմիրնովան ստացել են բարձր շաքարայնությամբ և բերքատվությամբ սեխի ձևեր:

Ա. Տ. Գալկան ստացել է դդմի հեռանկարային ձև, Հ. Գ. Բատիկյանը և Է. Գ. Քոչարյանը սեխը պատվաստելով դդմի վրա, ստացել են փոփոխություն պտղի մորֆոլոգիական հատկությունների, ինչպես և գույնի ու հյութայնության մեջ:

Ն. Ա. Խոխլաչևան, որպեսզի բարձրացնի վարունգի չորադիմացկունությունը և պտղակալումը, Կուրանի պայմաններում վարունգը պատվաստել է դդմի վրա: Պատվաստման մեթոդով նա վերացրել է դդմների զանազան տեսակների չխաչաձևման հատկությունը: Սովորական պայմաններում չխաչաձևվող տեսակներից նա ստացել է միջտեսակային վեգետատիվ-սեռական հիբրիդ: Այդ հիբրիդն ունի բարձր շաքարայնություն ու վիտամինների բարձր տոկոս և միաժամանակ ձևոք է բերել վաղահասություն ու բարձր բերքատվության հատկանիշներ:

Վ. Ֆ. Բելիկը պատվաստելով դդմը վարունգի վրա և հետագայում խաչա-

ձեռնով պատմականապես պատվաստակալի փոշիով, կարողացել է վերացնել նրանց մեջ շխաշաձևման հասկոթյունը: Միջուկակալին խաշաձևումներից նա ստացել է բարձր բերքատվությամբ և որակով դգմի բույսեր, քան նրանց ելակետային ծնողական ձևերի դգումները: Բոստանային կուլտուրաների պատմաստման դժվարությունները հանդիսանում են նրանց քիմիական կազմի խիստ տարբերությունները: Դ. Կոստովը և Ս. Ստոյլովը (Բուլղարիա) վարունդը պատվաստելով դգմի վրա, նրա բերքատվությունը բարձրացել են 43,4%: Հողանդիայում սեխը և վարունդը պատվաստելով դգմի վրա, ստացել են ցրտադիմացկուն և հիվանդությունների նկատմամբ իմունիտետ ունեցող սեխի բազմաթիվ ձևեր: Խ. Գեորգիևը (Բուլղարիա) բոստանային կուլտուրաները պատվաստում է շաքիլային փուլում: Կատարելով ձմերուկի պատվաստում դգմի վրա, նա ստացել է «Բուլղարակի» ձմերուկի սորտը լեռնային շրջանների համար: Զերմոցային պայմաններում ձմեռը աճեցրել է սեխը՝ դգմի վրա այն պատվաստելու միջոցով: Պատվաստման դժով բավականին մեծածավալ աշխատանքներ են կատարվել նաև կաղամբի, ճակնդեղի, դազարի և ուրիշ կուլտուրաների հետ (Ա. Ս. Կրուժիլին, Զ. Մ. Շվիդսկոյ, Մ. Խ. Չայլախյան և Լ. Պ. Խլոպինկովա, Ա. Ս. Օկանինկո և Ն. Վ. Վանդյուկ, Ա. Ֆ. Մարիննիկ, Ն. Ա. Նիզովսկի և Ն. Ֆ. Տիտովա, Ե. Ս. Վրժեշ, Ն. Ն. Սադայգակ, Ի. Ֆիդլեր (Չեխոսլովակիա), Ա. Ֆելյուտովիչ և Վ. Բեյներ (Լեհաստան), Ն. Ա. Սավչինկո, Ա. Կ. Նիքեյկին, Ա. Ա. Ավադյան, Վ. Յու. Բազավյուկ, Ա. Պ. Կարոտկևիչ, Բ. Վ. Կվասիկով, Ս. Յա. Կրակտոյ):

Այս աշխատանքների հետևանքով հնարավոր է դարձել բարձրացնել շաքարի տոկոսը ճակնդեղի մոտ, ուժեղ կերպով փոխել, նրա բիոքիմիական կազմությունը, ազդել ստադիական զարգացման ընդհանուր պրոցեսների առանձին մոմենտների վրա և այլն:

Վեգետատիվ հիրրիդացման զանազան հարցերի ուսումնասիրության ուղղությամբ բավականին աշխատանքներ են կատարել նաև ամերիկյան գիտնականները: Ֆ. Ու. Գոֆմանը միմյանց վրա պատվաստելով լոբու երկու տեսակներ, ստացել է փոփոխված ձևեր: Լ. Ռ. Դեաթինը պոմիդորը պատվաստել է դուդմայի, ծխախոտի, կարտոֆիլի, սև մորմի վրա: Պատվաստակալը ծլման էներգիայով, պտուղների և սերմերի մեծությամբ պատվաստացուների վրա թողել է իր ազդեցությունը, որը և միաժամանակ ժառանգվել է, հաջորդ սերունդներում: Ի. Լ. Ֆեննիչը նշում է, որ տրոպիկական և սուբտրոպիկական կլիմայական պայմաններում պատվաստման մեթոդը արժեքավոր արդյունքներ է տվել խաղողի սելեկցիայի զարգացման գործում: Ռ. Ֆրենկելն ստացել է դեկորատիվ բույսերի վեգետատիվ հիրրիդներ:

Բանջարանոցային կուլտուրաների, դեկորատիվ բույսերի, դգմազգիների, մորմազգիների հեռավոր հիրրիդացման ուղղությամբ աշխատել է Ս. Կրիպսինը (Իսրայել): Պոմիդորի Արմանդ սորտը կարտոֆիլի վրա պատվաստելով, նա ստացել է բարձր բերքատու վաղահաս, չոր նյութերով հարուստ պոմիդորի պտուղներ: Դեկորատիվ բույսերի մոտ ստացված են հետաքրքիր փոփոխություններ: Նրանցից մի քանիսը ավելի շուտ են ծաղիկներ տվել, քան ելակետային ձևերը, իսկ ծաղկման ժամանակաշրջանը տևել է մինչև 5 ամիս: Մի շարք բույսեր տվել են ծաղիկների բուրբուրվին նոր ձևեր:

Վերջին շրջանում կարևոր հետազոտություններ են կատարել նաև ճապոնական գիտնականները (Տ. Նակամուրա, Է. Իոնեյամա, Ի. Սինոսու): Ստաց-

ված են պոմիդորի, բադրիջանի մեծ քանակությամբ վեգետատիվ հիւրրիդներ:

Ուշագրության արժանի են վեգետատիվ հիւրրիդացման գծով կատարված աշխատանքները նաև այլ երկրներում: Կ. Մուդենզավեր (Լեհաստան), Օ. Ֆրիդա (Գերմանական Դեմոկրատական Ռեսպուբլիկա), Ա. Պրյադչենկո, Ա. Պետերֆի և Ն. Բրոգովիցկո (Ռումինիա), Ի. Ֆեդերա, Յա. Լիմբերկա (Չեխոսլովակիա), Կ. Մատոնա և Մ. Ստրունա (Ֆրանսիա) և ուրիշ.):

Պատվաստման միջուրինյան մեթոդները բազմամյա բույսերի հետ այժմ աննախընթաց մեծ կիրառում են ստացել ժողովրդական տնտեսության մեջ թե՛ մեզ մոտ և թե՛ արտասահմանում: Այստեղ էլ ժառանգականության փոփոխության հիմքում ընկած է պատվաստակալի ու պատվաստացուի միջև պլաստիկ նյութերի փոխանակությունը: Բազմամյա բույսերի մոտ նույն մեթոդով ստացված են պտղատուների և խաղողի բազմաթիվ նոր սորտեր, որոնք աչքի են ընկնում իրենց ցրտադիմացկունությամբ, չորադիմացկունությամբ, հիվանդությունների նկատմամբ իմունիտետով, լավ որակի պտուղներով, բիոքիմիական ուժեղ փոփոխություններով և այլն: Կայուն արմատական սխտեմ ունեցող պատվաստակալների վրա ստեղծվել են բազմաթիվ տնկիներ:

Վերջին տարիների ընթացքում այդ ուղղությամբ լավագույն արդյունքներ են ստացել Ն. Մ. Չերենենկոն, Ա. Ի. Իսաևը, Լ. Մ. Կրավչենկոն, Ա. Ի. Կասյանենկոն, Պ. Ն. Յակովլևը, Ա. Մ. Դեսյատովը, Պ. Ի. Լավրիկը, Ֆ. Վ. Շատիլովը և Ռ. Ա. Պրիբավկինան, Խ. Կ. Ննիկեն, Վ. Ի. Օստապենկոն, Տ. Կ. Ննինը, Պ. Կ. Այվազյանը, Ն. Ն. Ջախարովը, Ա. Ա. Բասանկոն, Մ. Ա. Ժուրովյովը, Ի. Խ. Ռիխերը, Ա. Ն. Բերենզերը և ուրիշներ:

Ի. Վ. Միչուրինի մեթոդներից օգտվելով, վերջին տարիների ընթացքում Ն. Մ. Չերենենկոն, Ա. Վ. Պետրովը, Ա. Է. Իսաևը, Մ. Ա. Լիսանվենկոն, Ա. Ն. Վենյամինովը, Մ. Ի. Պանասովը, Ի. Ա. Գորշկովը, Տ. Դ. Ֆեդոսենկոն, Պ. Ա. Ժավորոնկովը, Խ. Կ. Ննիկենը պտղատուների զույգերի ճիշտ ընտրության հետևանքով ստացել են սառնամանիքների, չորայնության, հիվանդությունների և այլի հանդեպ կայուն բազմաթիվ սորտեր:

Վերջին շրջանում բավականին հետաքրքիր փաստեր են կուտակվել միկրոբիոլոգիայում վեգետատիվ հիւրրիդացման կիրառման գծով: Արձանագրված են բազմաթիվ փաստեր, որ տարբեր տիպի և տեսակի միկրոբների համատեղ ապրելու դեպքում մի տեսակի միկրոբները ձեռք են բերում մյուս տեսակի միկրոբների հատկությունները և կամ լրիվ փոփոխվում են (Ն. Պ. Գրաչևա, Ն. Ֆ. Գամալեյա, Մ. Ն. Պրոխորով, Գ. Պ. Կալինա, Վ. Դ. Տիմակով, Ն. Խ. Ժիտով, Դ. Տ. Կուզլաշ և ուրիշ.): Հետադաշտում փորձեր են կատարվել մեկ տեսակի միկրոբների բազմացման մեկ ուրիշ տեսակի միկրոբների քիչների կազմության մեջ (Էվիրի, Սալ, Լեոդա և Մակ-Կարտի): Նրանք ուսումնասիրել են Պնևմոկոկների տրանսֆորմացիան:

Հետաքրքրություն են ներկայացնում Ա. Ի. Օսլարինի, Տ. Լ. Կուրսանովի, Ն. Մ. Սիսակյանի, Բ. Ռուբինի և ուրիշների աշխատանքները քիչների կոզմից ֆերմենտների կլանման (ադսորբցիայի) ուղղությամբ: Այսպես, օրինակ, նրանք ցույց տվեցին, որ շաքարասնկային քիչներն ընդունակ են կլանելու ջրային լուծույթների տարբեր ֆերմենտներ: Կլանելով այդ ֆերմենտները, շաքարասնկային քիչները աչնուհետև իրենք են սկսում այն սինթեզել և հետագա սերունդներում օգտվում են նրանցից, որպես հատուկ սխտեմի կոմպոնենտից:

Բոլոր դեպքերում կատարվում է ուրիշ տեսակի միկրոօրգանիզմների կողմից արտադրված պլաստիկ նյութերի ստիպողական ասիմիլյացիա:


Հետաքրքրական են նաև Ս. Ա. Ալիխանյանի և Լ. Ն. Բորիսովայի աշխատանքները «Վեգետատիվ հիբրիդացումը սնկերի penicillium ցեղի մոտ», որոնք ստացել են պենիցիլինումի մեծ քանակություներ ունեցող և հետերոդիսային բնույթի վեգետատիվ հիբրիդներ:

Բավականին մեծ ուշադրության են արժանի այն աշխատանքները, որոնք կատարվում են կենդանիների վեգետատիվ հիբրիդացման բնագավառում: Կենդանի օրգանիզմում մշակվող օրգանական սննդի, պլաստիկ նյութերի միջոցով ստացվում են հիբրիդներ:

Այդ տեսակետից ուշադրավ են Մ. Ի. Բոգոլյուբսկու, Կ. Բրատանովի, Գ. Սլավչևի, Գ. Կ. Կիչևայի (Բուլղարիա), Գ. Մ. Մուշտակիրի, Վ. Պ. Նիկոտի, Վ. Վ. Ֆերդինանդովի, Կուլենցովի, Մ. Մյաչայինի և Մրաչովայի (Չեխոսլովակիա) և ուրիշների աշխատանքները միջցեղային սպիտակուցների փոխներարկման մեթոդի կիրառման ուղղությամբ թռչունների ձվերի մեջ: Այդ դեպքում նրշվում է, որ թռչունների որոշ ցեղական հատկությունները անցնում են սերունդներին, բարձրանում է նրանց կենսականությունը: Բայց այս հարցերը դեռ չեն ստացել անհրաժեշտ տեսական մեկնարանություն: Այստեղ, հավանական է, ազդեցությունը սաղմի վրա կատարվում է նրա զարգացման ավելի ուշ ստադիայում: Ազդեցության էֆեկտը կախված է սաղմի և կամ սեռական բջիջների զարգացման ստադիայից: Պետք է փնտրել այնպիսի մեթոդներ, որոնք կնպաստեն ուժեղացնելու ազդեցությունը սաղմի ձևավորման ավելի վաղ ստադիայում:

Այդ մեթոդներից է ձվարանների, ձվաբջջի կամ զիգոտայի, սեռական գեղձերի միջցեղային տրանսպլանտացիան, որը կիրառում ստացավ մի շարք հետազոտողների կողմից ճագարների, ոչխարների, խոզերի և կրիաների վրա կատարված փորձերում (Չ. Ֆ. Իսաչենկո, Օ. Վ. Կրասովսկայա, Ա. Ի. Օպարին, Ն. Վ. Լոդինովա և Պ. Լ. Կարպով, Ա. Վ. Կվասիցկի, Ա. Դ. Կուրբատով, Ս. Մ. Սարգսյան, Վ. Կեսլուն, Ֆիլիպով և ուրիշ.): Այս դեպքում ստացվում է հետերոդիսային սերունդ, որն իրեն արտահայտությունն է դնում աճման տեմպի ուժեղացման մեջ:

Վերջին տարիների ընթացքում կիրառվել է նաև արյան հաճախակի փոխանակման մեթոդը և պարարիտը տարրեր հավերի ցեղերի միջև, հնդկահավերի ու ցեսարկայի և մյուս կողմից հավերի միջև: Թռչունների և ճագարների վրա կատարված փորձերից պարզվում է, որ էրիտրոցիտները, լեյկոցիտները, մարմնի տարրեր հյուսվածքները, գեղձերը գոնորից ներարկված ռեցիպիենտին փոխում է վերջինիս ժառանգականությունը: Ավելանում է էրիտրոցիտների քանակը և հեմոգլոբինը, բարձրանում է ձվատվությունը, կենսականությունը: Փոխվում է փետուրների, կտուցի, ոտների գույնը: Ավելանում է աճը, մեծանում է քաշը, ստացվում են հետերոդիսային խմբեր: Այս ճանապարհով ստացված են Լենինգրադի սպիտակ սև բծավոր, սև, մեծ կշիռ ունեցող ցեղային խմբերը: Նրանց մեջ կան 4 կգ քաշ ունեցող հավեր և աքլորներ: Միջին ձվատվությունը հասնում է 171-ի, ձվի կշիռը՝ 20—65 գ-ի: Լավ են հարմարված տեղական պայմաններին: Ստացված լավատույն հատկանիշները պահպանվում են նաև հետագա սերունդներում: Այս դեպքում գոնորից սերունդին են անցնում բազմաթիվ հատկություններ: Ուրիշ ուղղությամբ ազդեցության տակ ռեցիպիենտի մոտ զարգանում են գոնորից սերունդների հատկանիշները: Այս



մեթոդին մոտ է կանգնած նաև պարարիողի մեթոդը: Ժամանակավոր պարարիողի ազդեցության տակ ճագարների մոտ բարձրանում է սերնդի կենսականությունը, անգամ փոխվում են բրդի ստրուկտուրան և մաշկի գույնը (Պ. Մ. Սոպիկով, Բ. Գ. Նովիկով, Խ. Գ. Մոխև, Ե. Վ. Տոլոկոնինկո, Կ. Բրատանով (Բուլղարիա), Մ. Գաշեկ (Չեխոսլովակիա), Խ. Ֆ. Կուշներ, Ա. Մ. Գրոմով, Պ. Ի. Ֆիոկտիսով, Գ. Վ. Բորյաշով-Նիժնիկ, Լ. Ֆ. Բերիզկինո և ուրիշ.): Այստեղ դեռ դժվար է բացատրել սերնդի ժառանգական հատկությունների վրա արյան փոխներարկման մեթոդի ազդեցության մեխանիզմը: Կարող են տվյալ դեպքում նշանակություն ունենալ էրիտրոցիտներից ստացված զեղօքսիդիչ նուկլեաթիդները, որոնք ազդում են, օրինակ, բազերի տարրեր ցեղերի աճման և զարգացման պրոցեսների վրա:

Հետաքրքրական է նաև ձվարանների միջցեղային տրանսպլանտացիան, որը կատարվել է կաթնասունների, հավերի, շերամի որդի վրա (Ի. Ա. Բարիշնիկով, Մ. Գ. Զաբս, Ե. Ֆ. Պավլով և ուրիշ.):

Բ. Գ. Նովիկովը կատարեց հավերի և բազերի սերմնարանի կամ արական սեռական գեղձերի միջցեղային տրանսպլանտացիա, հետագայում վերցնելով դրանից (տրանսպլանտացիայի ենթարկված սերմնարանից) սպերմը՝ արհեստական սերմնավորման միջոցով նորմալ էգերին բեղմնավորելու համար: Սերմնարանի տրանսպլանտացիան կատարում են կենդանու հետսաղմնային զարգացման վաղ շրջանում: Այս փորձերը կատարվել են հավերի լեզզորն ցեղերի և բազերի պեկինյան ցեղերի միջև:

Ստացվում են մի շարք հետաքրքիր փոփոխություններ, ինչպես և տեղի է ունենում նորառաջացում, բացի այն հատկանիշներից, որոնք անցնում են սերունդին ղոնորից և ռեցեսսիվներից:

Այսպիսով, մենք տեսնում ենք, որ ժառանգական փոփոխությունները կենդանիների մոտ անցնում են ոչ միայն սեռական ճանապարհով, այլև ֆիզիոլոգիական ակտիվ նյութերի միջոցով, որոնք շրջանառության մեջ են գտնվում օրգանիզմում, այսինքն վեգետատիվ ճանապարհով:

Բեղմնավորված և չբեղմնավորված ձվարջիջների տեղափոխումը (Ս. Վ. Կրասնովսկայա, Ա. Վ. Կվասիցկի, Ի. Խ. Սոկոլովսկայա, Ա. Մ. Սարգսյան, Ա. Դ. Կուրբուևով, Ե. Ֆ. Պավլով, Պ. Գ. Սերերրյակով և Պ. Ն. Կրուշինիկովա, Ա. Ի. Կոպերին և ուրիշ.) նույնպես դրական արդյունքներ է տալիս:

Միացման միջոցով (պարարիող) օրգանիզմի սաղմնային և հետսաղմնային շրջանում (Բորյաշով-Նիժնիկ) ճագարների մոտ փոխվում են մի շարք հատկանիշներ՝ բրդի որակը, կենդանու քաշը և այլն: Հիդրայի մոտ այդ նույնպես լավ է արտահայտվում:

Կ. Բրատանովը (Բուլղարիա) լեզզորն հավերի մեջ կատարել է ներմաշկային կամ ներմկանային արյան ներարկում սև փետուրներ ունեցող հնդկահավերից: Ստացված ձտերի մոտ տարրերվում է փետուրների գույնը (սև փետուրներ), ձտերը տարրերվում են ստուգիչ ձտերից նաև իրենց բարձր քաշով:

Մեղունների մոտ (Ա. Ֆ. Գուբին, Ի. Ա. Խալիֆման) ցեղային առանձնահատկությունների փոփոխությունները անցնում են սննդի միջոցով: Մի ցեղի ձվերը դաստիարակվում են (սննդի միջոցով) մյուս ցեղի ընտանիքում: Փորձարկվել են հյուսիսային և արևադարձային մեղունները, որոնք տարրեր ձևով են ծածկում մոմարջիջները:

Կատարված է նաև բեղմնավորված և չբեղմնավորված ձվարջիջների տեղա-

շարժ մի էգից մյուսի մեջ: Նրանք ստիպված են ասիմիլյացիայի ենթարկել կյանքի նոր սլայմանները և փոխել իրենց ժառանգականությունը:

Հիբրիդացումն ընդհանրապես որպես հզոր միջոց է ծառայում բուսական և կենդանական ձևերի փոփոխության գործում: Մասնավորապես, վեղետատիվ հիբրիդացման ժամանակ, հենվելով օրգանական էվոլյուցիայի օրինաչափությունների ճանաչման վրա, հնարավոր է նպատակադիր փոխել օրգանիզմների ժառանգականության ձևավորման պրոցեսը մեր ցանկացած ուղղությամբ:

Պատվաստման ժամանակ լրիվ կերպով խախտելով ամբողջ օրգանիզմի պահպանողականությունը, մենք երկու տարբեր ձևերից, նյութափոխականության հիման վրա, ստանում ենք երրորդը՝ բոլորովին նոր օրգանիզմ, զարգացրելով նրա մեջ լավագույն հատկանիշներն ու հատկությունները: Վեգետատիվ հիբրիդացումն ավելի է լայնացնում մեր ճանաչողությունը հասկանալու և ուսումնասիրելու ժառանգականությունն ու նրա փոփոխականությունը և պրակտիկորեն օգնում է մեզ լուծելու ժողովրդական տնտեսության մի շարք կարևոր հարցեր: Հաճախ վեգետատիվ հիբրիդացման ժամանակ բիոլոգիական խորը փոփոխություններն ու վերականգնումները ավելի ուժեղ են արտահայտվում, քան այն մենք նկատում ենք սեռական հիբրիդացման դեպքում: Սերմնային սերնդում հատկանիշների և հատկությունների փոփոխության ամպլիտուդան ավելի մեծ և ուժեղ է լինում: Վեգետատիվ հիբրիդներն ունեն մի շարք սպեցիֆիկ կողմեր, որոնք չեն նկատվում սեռական հիբրիդացման ժամանակ: Վեգետատիվ հիբրիդացման առանձնահատկություններից մեկն այն է, որ, ի տարբերություն սեռականի, այս դեպքում բազմադանություն նկատվում է արդեն առաջին սերնդում, որը, անկասկած, ունի սելեկցիոն մեծ նշանակություն: Հետերոզիսի երևույթը, ի տարբերություն սեռական հիբրիդացման, պահպանվում է նաև հաջորդ սերնդում:

Վեգետատիվ հիբրիդացման ժամանակ հաճախ դոմինանտության երևույթը հանդես է գալիս այլ ձևով: Ռեցեսիվ հատկանիշները զարգանում են ու դառնում դոմինանտ, իսկ դոմինանտ հատկանիշները զարգանում են ու տալիս ռեցեսիվ հատկանիշներ: Նկատվում են ռեցեսիվ հատկանիշների լրիվ կյանման առանձին դեպքեր:

Վեգետատիվ հիբրիդացման ժամանակ առաջին սերնդում նկատվող բազմազանությունը հետևանք է պատվաստվող կոմպոնենտների և ընդհանրապես հիբրիդացման պրոցեսների երկարատև փոխազդեցության: Սեռական հիբրիդացման դեպքում, շատ կարճ ժամանակում ձուլվում են երկու սեռական բջիջներ, որոնք պատմականորեն ձևավորվել են որպես ավելի կայուն և ինքնուրույն օրգանիզմներ: Վեգետատիվ հիբրիդացման ժամանակ փոխադարձ ազդեցությունը միմյանց վրա, կամ հիբրիդացման պրոցեսն սկսվում է պատվաստման ժամանակից՝ դեռևս պատվաստվող կոմպոնենտների երիտասարդ հասակից:

Մինչև ռեպրոդուկտիվ օրգանների առաջացումը սկիզբ առնող նորանոր սումատիկ բջիջները իրենց ղենետիկական բնույթով սկզբում լինում են համեմատաբար միասնական: Սումատիկ բջիջները, երկարատև զարգացման պրոցեսում, մյուս կոմպոնենտի սննդանյութերի ազդեցության տակ, դառնում են ավելի բազմազան և տարորակ: Նրանցից առաջացող սեռական բջիջներն իրենց մեջ պարունակում են այդ տարբերությունները: Այսպիսով, պատվաստվող կոմպոնենտների փոխադարձ ազդեցությունը, երկարատև հիբրիդացման պրո-

ցեսի հետևանքով, ավելի խորն է լինում և նպաստում է, որպեսզի նոր օրգանիզմի ձևավորմանը մասնակցեն մեծ քանակությամբ տարրեր ըջիջների որը և իր հերթին ապահովում է սերնդում ստացվող մեծ բազմազանություն: Վեգետատիվ հիբրիդների մոտ ավելի ուժեղ փոփոխություններ ստացվում են ոչ այնքան պատվաստվող բույսերի մոտ, որքան նրանց սերնդում:

Պատվաստվող կոմպոնենտները կյանքի փոփոխության պայմաններում, օրգանիզմի զարգացման տարրեր էտալներում, համապատասխան կերպով փոխում են պլաստիկ նյութերը, որոնք տանում են գեպի որակապես նոր, փոփոխված, իրենց բնույթով տարրեր, վերարտադրող ըջիջների առաջացմանը:

Վեգետատիվ հիբրիդների ըջիջների մեջ ստրուկտուրային նոր առաջացումների վերաբերյալ կուտակված բազմաթիվ փաստերը և ըջիջներին հատուկ մետարոլիզմը օրգանիզմի կյանքի գործունեության փոփոխված խիստ պայմանների ազդեցության տակ, հիմք են տալիս եզրակացնելու, որ վեգետատիվ հիբրիդացումը հզոր գործոն է հանդիսանում փոփոխություններ առաջացնելու տեսակետից: Բույսերի սերմերի մեջ կարծես ակումուլացիայի է ենթարկված նրանց նախորդ սերունդների ամբողջ պատմությունը: Եվ որքան այդ պատմության ընթացքում առաջացող օրինաչափությունները ընկնում են մարդու ազդեցության տակ, այնքան հարստանում են նոր հատկանիշների և հատկությունների զարգացման ու ձևաառաջման հնարավորությունները: Վեգետատիվ հիբրիդացման ժամանակ ստացվող հարուստ բազմազանությունը մեծ նշանակությունի սեյկեցիայի գործում, որովհետև ավելի մեծ հնարավորություններ են ստեղծվում ընտրության համար:

Վեգետատիվ հիբրիդների առաջին սերնդում բույսերի փարթամությունը և նրա պահպանումը հետագա սերունդներում, բոտ երևույթին, բացատրվում է նրանով, որ պատվաստումների ժամանակ, պատվաստվող կոմպոնենտների ազդեցության տակ, օրգանիզմը ամբողջապես ավելի շատ ու երկար է ենթարկվում հիբրիդացման, որի հետևանքով կենսական պրոցեսներն ընթանում են ավելի ինտենսիվ:

Վեգետատիվ, ինչպես և սեռական հիբրիդացման ժամանակ տեղի է ունենում նորի առաջացում, ստացվում են մեծ քանակությամբ նոր հիբրիդներ, որոնք դուրս են գալիս իրենց պատվաստվող կոմպոնենտների սորտային առանձնահատկությունների սահմաններից:

Զարգացման ընթացքում օրգանիզմը ենթարկվում է ուժեղ դիֆերենցիացիայի, և նրա ըջիջները զարգացման տարրեր մոմենտներում որակապես միմյանցից տարբերվում են: Դրա հետևանքով նոր օրգանիզմի տարրեր ըջիջները օժտվում են տարրեր մորֆոլոգիական, ֆիզիոլոգո-քիմիական առանձնահատկություններով: Այստեղից պետք է եզրակացնել, որ ուժեղ փոփոխություններ, որոնք տեղի են ունենում օրգանիզմի ըջջային կառուցվածքի կազմության մեջ (բրոմոստոմների քանակի և մորֆոլոգիայի հետ կապված փոփոխությունները) հետևանք են նրանց բնույթի տարրական: Նոր բրոմոստոմների առաջացումը հետևանք է նորառաջացման: Այդ բրոմոստոմները առաջանում են միտոզի ընթացքում ամբողջ ըջջի խորը վերակառուցման հետևանքով, բոլորովին նոր հիմքի վրա, պատվաստվող կոմպոնենտների փոխազդեցության հետևանքով: Դա վեգետատիվ հիբրիդիզացիայի հետևանքն է և ոչ թե նրա պատճառը: